Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն
ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԼ-ՄԱՐՋԱՆ ԿՂԶԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Վահան Մարտիրոսյան:

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Արաբական Միացյալ Էմիրություններ (Ալ-Մարջան կղզի), 2018թ. փետրվարի 7-9-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

«Ստարտափ Արմենիա» հիմնադրամ:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Սիսայդ Ստարտափ Սամմիթ 2018» միջոցառմանը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը 2018թ. փետրվարի 7-9-ը ԱՄԷ-ում մասնակցել է «Սիսայդ Ստարտափ Սամիթ 2018» կրթական բիզնես համաժողովին:

Վերոնշյալ միջոցառումն անցկացվում էր ԱՄԷ գերագույն խորհրդի անդամ, Ռաս ալ Խայմայի ղեկավար, Նորին մեծություն շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմի բարձր հովանու ներքո:

Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին ինչպես Հայաստանից, այնպես էլ տարբեր երկրներից ժամանած շուրջ 2000-ից ավելի ներկայացուցիչներ՝ բարձրաստիճան պաշտոնյաներ, գործարարներ, ներդրողներ, ստարտափների ներկայացուցիչներ, վենչուրային ընկերություններ, փորձագետներ:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցան մի շարք քննարկումներ, բանակցություններ, առանձին հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվեցին

ոլորտի հիմնախնդիրները և զարգացման նպատակով ներդրումների ներգրավման հնարավորությունները:

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ նաև նախարար Վահան Մարտիրոսյանը: Իր ելույթում նախարարը կարևորեց թվային և ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտների զարգացման նշանակությունը Հայաստանի համար և նշեց, որ ներկայումս ՀՀ կառավարությունը վարում է այդ ճյուղերի զարգացմանն ու խթանմանն ուղղված քաղաքականություն և նշված բնագավառում արդեն իսկ գրանցվել է ստարտափերի թվի կտրուկ աճ:

Ներկայացուցչական այս միջոցառման ընթացքում հնարավորություն ընձեռվեց տարբեր երկրներից ժամանած ստարտափների, գործարարների, ներդրողների միջև փորձի փոխանակման, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության հնարավորությունների քննարկման համար:

Համաժողովի ընթացքում ելույթներով հանդես եկան արդեն իսկ հաջողության հասած ստարտափներ: Նրանք կիսվեցին իրենց փորձով ու գիտելիքներով, ներկայացրեցին հաջողության հասնելու իրենց գրավականները:

Միջոցառման ընթացքում տարբեր երկրներից հրավիրված ոլորտի փորձառու մասնագետները ստարտափների համար անցկացրեցին հատուկ աշխատաժողովներ ու դասընթացներ:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը Արաբական Միացյալ Էմիրություններ աշխատանքային այցի շրջանակներում փետրվարի 8-ին հանդիպեց ԱՄԷ գերագույն խորհրդի անդամ, Ռաս ալ Խայմայի ղեկավար, Նորին մեծություն շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմին:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ճանապարհաշինության, թվային ենթակառուցվածքների ոլորտների զարգացման հեռանկարներին, տրանսպորտային միջանցքներին, ՀՀ-ի և ԱՄԷ-ի միջև ավիացիոն փոխադրումներին, ստարտափներին առնչվող երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Վահան Մարտիրոսյանը շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմին ներկայացրեց այս ոլորտներում իրականացվող ՀՀ պետական քաղաքականությունը և ընթացիկ ծրագրերը:

Մասնավորապես՝ ներկայացվեցին Հայաստանի տնտեսական աճի տեմպերը, ՏՏ ոլորտում գրանցված ցուցանիշներն ու ձեռքբերումները, Հայաստանի թվային օրակարգը, պետություն-մասնավոր հատված ձևաչափով իրականացվող ներդրումային ծրագրերը, ինչպես նաև ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները Եվրասիական տնտեսական միության և Եվրոպական միության հետ:

Հանդիպման ավարտին նախարարը Նորին մեծություն շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմին հրավիրել է Հայաստան՝ համագործակցության հետագա քայլերը և քննարկված ծրագրերը իրականացնելու նպատակով:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Վահան Մարտիրոսյան

27.02.2018թ.